ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N07-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

« »_____ 2025 թվականի N___-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N07-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<Նորմատիվ իրավական ակտերի մասին> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի մարտի 5-ի <Շինարարական հրապարակում շինարարական աշխատանքների կազմակերպման և անվտանգության ապահովման ուղեցույցը հաստատելու մասին> N07-Ն հրամանով հաստատված հավելվածի.

1) 2-րդ գլխի 3-րդ կետի <Քաղաքաշինական գործունեության մասնակիցները (պատվիրատու/կառուցապատող/կապալառու (այսուհետ՝ Գործատու)) պարտավոր է.> բառերը փոխարինել <Քաղաքաշինական գործունեության մասնակից հանդիսացող (պատվիրատու/կառուցապատող/կապալառու (այսուհետ՝ Գործատու)) Գործատուն պարտավոր է.> բառերով,

2) 2-րդ գլխի 3-րդ կետի 7-րդ ենթակետից հետո լրացնել նոր՝ 7.1-ին ենթակետ, հետևյալ բովանդակությամբ. <ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 26-ի N21-Ն հրամանով ամրագրված հատուկ աշխատանքներն իրականացնել կարգագիր-թույլտվության ձևակերպմամբ (հայերեն կամ անգլերեն կամ ռուսերեն)՝ ըստ ստորև ներկայացված օրինակելի ձևի,>,

3) 4-րդ գլխից հետո լրացնել նոր՝ 5-րդ գլուխ, հետևյալ բովանդակությամբ.

<u>Օրինակելի ձև</u>

ԿԱՐԳԱԳԻՐ-ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N

1.	Իրականացվող հատուկ աշխատանքների անվանումը	համառոտ նկարագրությ
2.	Կապալառու կազմակերպություն	անվանումը, տնօրենի ան ազգանունը
3.	Շինաշխատանքների ղեկավար (աշխղեկ)	անունը, ազգանունը
4.	Շինաշխատանքների որակի տեխնիկական հսկող	անունը, ազգանունը
5.	Շինաշխատանքներում ներգրավված բանվորական անձնակազմ	անունը, ազգանունը
5.1	...	
5.2	...	
5.3	...	
6.	Շինաշխատանքների մեկնարկ	ամսաթիվը, ժամը
7.	Շինաշխատանքների կանխատեսվող և փաստացի ավարտ	ամսաթիվը, ժամը
8.	Շինարարական հրապարակում անվտանգության և հատուկ պայմանների ապահովում	իրականացված անվտանգության և հատ միջոցառումների համառ նկարագրությունը
9.	Կարգագիր-թույլտվության տրամադրում	ամսաթիվը, ժամը
11.	Կարգագիր-թույլտվության երկարաձգման ժամկետ (ըստ անհրաժեշտության)	ամսաթիվը , ժամը

12.	Շինաշխատանքներն իրագործելու պայմանների ստուգում, բանվորական անձնակազմի իրազեկում, թույլտվության տրամադրում	պայմանների ստուգման, բանվորական անձնակազ իրազեկման և թույլտվութ տրամադրման ամսաթիվ ժամը,
12.1		պատասխանատու աշխ ստորագրությունը
12.2		որակի տեխնիկական հսկ ստորագրությունը
13.	Շինաշխատանքներում ներգրավված բանվորական աշխատակազմի ստորագրություններ՝ 1-12 կետերի մասով իրազեկված լինելու վերաբերյալ	
13.1	…	
13.2	…	
13.3	…	

Գործատուի_____

(անունը, ազգանունը, ստորագրությունը, կնիքը)

:>

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: